Իսկ յաւանդել զոգին ի ձեռն Աստուծոյ՝ լցաւ անուշահոտութեամբ աւուն և տաճարն, և ի լրել խաւսիցն, խելագարեցան մերձակայքն. մորմոքեաց մայրն Սիոն, հառաչեաց հարսն, ողբացին աւրիորդքն, ճըչեցին փեսաւէրքն, աւաղէին աղքատքն, տըրտմէին տնանկքն, մորմոքէին մանկունքն, կողկողէին կուսանքն, արտասուէին ամուսինքն, տխրէին տղայքն, ծմրէին ծերքն, աղատէին արքն, կանչէին կանայքն, սրթային սարկաւագունքն, քրքուէին քահանայքն, եղուկէին եպիսկոպոսքն, վաէին վարդապետքն, հաւասարէր և հայրապետն, կատարելով զաւրէնս սգոյն որպէս և Ցէրն առ սիրելին. և յիրաւի զի զրկեցան յայնպիսի բարւոյն։

Զի՞նչ արարին և աշակերտքն որք եկին յԱթինա՝ զոր էր յղեալ յառաջագոյն, խնամելով և յետ մահուն, որպէս զԱստուած և զՄովսէս։ Որք եկին խնդութեամբ՝ և լրեալ լցան տրտմութեամբ անտանելի առեալ զսուգ Հայրենի։ Իսկ ի տեսանել և ի լսել զնշան լուսոյն՝ փարատեցաւ սուգն՝ և հերքեցաւ խաւարն, և կատարեցաւ աւուրք սգոյ լալեացն։

Իսկ Թէպէտ և նոքա մարդկաւրէն խորհէին՝ սակայն նա ազատեալ ի բանտէս՝ և մերկացեալ յախտէս, թեթևացեալ ի բեռնէս, վերանայր յերկինս պար առեալ անմար-